ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/290

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.10.2021թ. թիվ 26/26-1/16438-2021 գրությամբ «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 01.10.2021թ. թիվ 39/02-28-748 գրության հիման վրա, 08.10.2021թ. թիվ 26/26-1/16438-2021 գրությամբ նախաձեռնել է «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/290 ընթացակարգի շրջանակներում 29.10.2021թ. ժամը 10:02-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.10.2021թ. թիվ 39/02-28-748 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ 2021 թվականի սեպտեմբերի 20-ին, ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին տեղի է ունեցել ապրանքների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/135 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02696479, հեռ. +37455707205, էլ. հասցե՝ lsystemspromanager@gmai.com) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ հավելված 1-ում, հավելված 1.1-ում և հավելված 2-ում (կից ներկայացվում է շտկման ծանուցումը):

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 24.09.2021թ. համակարգի միջոցով ծանուցմամբ «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի

մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին շտկված փաստաթղթերը առ այսօր չեն ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/290 ընթացակարգի շրջանակներում 29.10.2021թ. ժամը 10:02-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/290 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/290 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/135» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 27.09.2021թ. նիստը հայտարարվել է բացված, այնուհետև նույն արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ի դիմում-հայտարարության փաստաթուղթը՝ Հավելված 1-ը, թերի է՝ բացակայում է հրավերով պահանջվող մասնակցի սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը: Սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ից բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Եթե «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ն

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, ապա դիմում-հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը» բառերը պետք է փոխարինվեր «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի բառերով և հայտով ներկայացվեր նաև հրավերով նախատեսված հավելված 1.3-ը: Սույն գնման ընթացակարգին հայտով ներկայացված փաստաթղթերը՝ Հավելված 1-ը, Հավելված 1.1-ը և Հավելված 2-ը, հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Համադրելով վերջինիս կողմից առաջարկած մակնիշները չեն համապատասխանում առաջարկվող և սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջված տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ 1.ուղեցուցիչ 120W COM-12 նշված մակնիշում բացակայում է հրավերով պահանջող MP3/USB/SD նվագարկիչը, 2. Ուժեղացուցիչ 240W COM-24 նշված մակնիշում բացակայում է հրավերով պահանջող MP3/USB/SD նվագարկիչը, 3. Բարձրախոսներ CENA 8-ի վերաբերյալ՝ բարձրախոսի համար Հրավերով պահանջված չափսերն են 260-190-59մմ (ուղանկյուն), մինչդեռ առաջարկվող CENA 8-ինը կլոր է և 8 դույմ: Հրավերով պահանջվել է 5.25 դույմ Woofer 1 դույմ transducer, մինչդեռ առաջարկվող մակնիշում ներկայացված է 8 դույմ և կլոր: Հրավերով պահանջվել է, որ բարձրախոսը լինի 2 Way, մինչդեռ առաջարկվող մակնիշը 1 Way է: Հրավերով պահանջվել է, որ հաճախականությունը պետք է լինի 50 Հg-20 Կhg, մինչդեռ՝ առաջարկվել է 100 hg-15 Կhg, 4. Խոսափող PDM-200-ի վերաբերյալ՝ հրավերով պահանջվել է ֆանտոմ սնուցում 48 V(DC) մարտկոցները 3վ. 2 անգամ AA տիպի, 40 Հg-20 Կhg (-3db), մինչդեռ առաջարկվող մակնիշում բացակայում է ֆանտոմ սնուցումը, մարտկոցներով աշխատանքի հնարավորությունը, խոսափողի գլխիկի վրայի լուսավորող օղակը, իսկ արձագանքի հաճախականությունը ներկայացված է 80 Հg-12 Կhg:

3. Նույն արձանագրության համաձայն՝ 27.09.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 24.09.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված թերությունների շտկված տարբերակները չեն ներկայացվել և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.10.2021թ. թիվ 26/26-1/16438-2021 գրությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 01.10.2021թ. թիվ 39/02-28-748 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/135» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 27.09.2021թ. նիստը հայտարարվել է բացված, այնուհետև նույն արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ի դիմում-հայտարարության փաստաթուղթը՝ Հավելված 1-ը, թերի է՝ բացակայում է հրավերով պահանջվող մասնակցի սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը: Սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ից բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Եթե «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, ապա դիմում-հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը» բառերը պետք է փոխարինվեր «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի բառերով և հայտով ներկայացվեր նաև հրավերով նախատեսված հավելված 1.3-ը: Սույն գնման ընթացակարգին հայտով ներկայացված փաստաթղթերը՝ Հավելված 1-ը, Հավելված 1.1-ը և Հավելված 2-ը, հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Համադրելով վերջինիս

կողմից առաջարկած մակնիշները չեն համապատասխանում առաջարկվող և սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջված տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ 1.ուղեցուցիչ 120W COM-12 նշված մակնիշում բացակայում է հրավերով պահանջող MP3/USB/SD նվագարկիչը, 2. Ուժեղացուցիչ 240W COM-24 նշված մակնիշում բացակայում է հրավերով պահանջող MP3/USB/SD նվագարկիչը, 3. Բարձրախոսներ CENA 8-ի վերաբերյալ՝ բարձրախոսի համար Հրավերով պահանջված չափսերն են 260-190-59մմ (ուղանկյուն), մինչդեռ առաջարկվող CENA 8-ինը կլոր է և 8 դույմ: Հրավերով պահանջվել է 5.25 դույմ Woofer 1 դույմ transducer, մինչդեռ առաջարկվող մակնիշում ներկայացված է 8 դույմ և կլոր: Հրավերով պահանջվել է, որ բարձրախոսը լինի 2 Way, մինչդեռ առաջարկվող մակնիշը 1 Way է: Հրավերով պահանջվել է, որ հաճախականությունը պետք է լինի 50 Հg-20 Կhg, մինչդեռ՝ առաջարկվել է 100 hg-15 Կhg, 4. Խոսափող PDM-200-ի վերաբերյալ՝ հրավերով պահանջվել է ֆանտոմ սնուցում 48 V(DC) մարտկոցները 3վ. 2 անգամ AA տիպի, 40 Հg-20 Կhg (-3db), մինչդեռ առաջարկվող մակնիշում բացակայում է ֆանտոմ սնուցումը, մարտկոցներով աշխատանքի հնարավորությունը, խոսափողի գլխիկի վրայի լուսավորող օղակը, իսկ արձագանքի հաճախականությունը ներկայացված է 80 Հg-12 Կhg:

Նույն արձանագրության համաձայն՝ 27.09.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 24.09.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված թերությունների շտկված տարբերակները չեն ներկայացվել և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ***<u>նորմը մեկնաբանվում է</u>՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ <u>ելնելով</u>***

դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների փառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***նույն օրը*** դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին

ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Այսինքն՝ Կարգի 41-րդ կետով սահմանված է, հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար էլեկտրոնային եղանակով <u>նույն օրը</u> դրա մասին մասնակցին <u>ծանուցելու իմպերատիվ պահանջ, որի չպահպանման դեպքում, կարող են անտեսվել այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը և հանգեցնել սխալ մեկնաբանման:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն

իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ գործում առկա փաստական հանգամանքների և կիրառման ենթակա իրավական նորմերի համադրման արդյունքում՝ արձանագրում եմ, որ թիվ 2 արձանագրության համաձայն՝ 27.09.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մինչդեռ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ Ընկերությանը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ծանուցել է 24.09.2021թ., այսինքն՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգին առնչվող փաստաթղթերում առկա են ամսաթվերի անհամապատասխանություններ՝ պարզ չէ թե անհամապատասխանությունները 27.09.2021թ. արձանագրվելու դեպքում դրանց վերաբերյալ քարտուղարի կողմից Ընկերությունը ինչպես է ծանուցվել 24.09.2021թ.:

Նման պայմաններում գտնում եմ, որ առկա չեն «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.10.2021թ. թիվ 26/26-1/16438-2021 գրությամբ «Էլսիսթեմսպրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ